

8. Խօջա Մաքսուտ Հալէպէն

9. Խօջա Ղանտին »

10. Խօջա Թուրաջ Սիսէն:

Ասոնց հետ Գրիգոր Կեսարացիի Երուսաղէմ գացած ըլլալը երբեք հաւանական չէ, վասնզի ինչպէս Սիմէոն Դալիրի գրածէն կը տեսնուի 1610 Յուլիս 18ին գործի կը ձեռնարկէ Ենկի Խօջա Ամթեցի, որ կուգայ Հալէպ, հոն ալ երեք ամիս ժողով ու հանգանակութիւն կը կատարուի:

Հաւանական է որ 20 պատուիրակներուն գալուստը 1611 գարնան կամ զէպի Զատիկ կատարուած ըլլայ: Արդ, Յակոբ քհ. Կեսարացի քանի որ կը հաստատէ թէ «դարձեալ ՌԿ (= 1611) թուին կրկին սարսի ի Բիզանդիա արժուակակն հրահանաւ», նիւթապէս ժամանակ չի կար Երուսաղէմ երթալու և անկէ Կ. Պոլիս դառնալու:

Յետոյ նկատի առնելով Յակոբ քհ. Կեսարացիի Կեսարիա գտնուիլը, եւ հոն գրելը այդ տողերը կարծես թէ արքունական հրամանով վերստին պատրիարք տարուիլը Կեսարիայէն եղած ըլլալու ձեւ մը ունի: Հետեւաբար կ'ենթադրեմ թէ Գրիգոր Կեսարացի 1610ին Ամթի գումարումէն յետոյ հաւանօրէն Կեսարիա եկած է և միայն շատ կարճ միջոց մը հոն մնալէ յետոյ դարձեալ Կ. Պոլիս հրաւիրուած է: